

ԱՐԹՐՈՒԹԻՎԱԿԱՆ ԳՐՈՒԵՄՆԵՐԻ ԵՎ ՀԹԻՐՈՓՈԽԻՎՈՅԻ ԽՈՏՏԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՎՈՐԻՌՈՒՄՆԵՐ  
СООБЩЕНИЯ ИНСТИТУТА АГРОХИМИЧЕСКИХ ПРОБЛЕМ И ГИДРОПОНИКИ

№ 11

Վ. Լ. ԱՆԱԶՅԱՆ, Ա. Շ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ո-ԱԴԻՌՈՒՄՆԵՐԻ ՊՈՒՏՄԱ ՊԱՐՈՒԵԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՀՈՂԱՏԻՎԵՐՈՒՄ

Հողի ռադիոակտիվության պրոբլեմը ներկայացնում է ոչ միայն գիտական հետաքրքրություն, այլև ունի որոշ գործնական նշանակություն: Այդ խնդրի կարևորությունը բազմիցս ընդգծել են Վ. Ի. Վերնազսկին, Ա. Պ. Վինոգրադովը [1]: Այս պրոբլեմի նշանակությունը մեծացալ, եթե հայտնագործվեցին ատոմային էներգիայի խաղաղ և ռազմական նպատակներով օգտագործման ուղիները: Հատկապես, եթե միջուկային զենքի փորձարկման հետևանքով հողի և կենսաբանական նյութերի մեջ թափանցեցին մը շարք ռադիոակտիվ իզոտոպներ:

Արհեստական իզոտոպներց կենսաբանական ցիկլում առանձնապես կարևոր է ՏՐ-90-ի (կիսատրոհման ժամանակամիջոցն է 28 տարի) և ՑՏ-137-ի (33 տարի) հետազոտությունը: Հայտնի է, որ ստրոնցիումը հանդես է զալիս որպես կալցիումի անալոգ: Դեռևս 1930 թ. Գեղրոցը [2] նկատել է, որ ստրոնցիումը բույսի աճման և զարգացման պրոցեսում որոշ շափով կարող է փոխարինել կալցիումին՝ նրա բացակայության դեպքում. եթե հողը հարստացնել կալցիումով, ապա բույսերը կկլանեն շատ քիչ ստրոնցիում:

Հետազոտվող հողային նմուշները վերցրել ենք վարելահողերից և ինոպան տեղամասերից: Ռադիուրիմիքական անալիզները [3] կատարված են երկու կրկնողությամբ (առանձին դեպքերում նաև չորս կրկնողությամբ):


Ուսումնասիրությունները կատարվել են հետեւյալ հողերում՝ զորշ, շագանակագույն, լինային սևահողեր, անտառային և լինամարգագետնային:

Հետազոտությունների արդյունքները բերված են աղյուսակ 1-ում և նկ. 1, 2-ում:

Խոպան հողերում, (աղյուսակ 1), անկախ հողի տիպից, ՏՐ-90-ի մեծամասը ( $52-80\%$ ) կուտակվել է մակերեսային շերտում: Խորությանը զուգընթաց ռադիոստրոնցիումի պարունակությունը նվազում է: Սակայն որոշ դեպքերում նկատվում են ՏՐ-90-ի տեղաշարժման առանձնահատկություններ:

Այսպիս՝ մարգագետնային խոտհարքների գոտում ռադիոստրոնցիումը տեղաշարժվել և կուտակվել է հաջորդ՝  $5-10$  սմ ( $75\%$ ),  $15-25$  սմ ( $52\%$ ) շերտերում: Հավանաբար, այստեղ ստեղծվել են ռադիոստրոնցիումի մակերեսային շերտից դեպի ստորին շերտերը լվացման յուրօրինակ պայմաններ:

Վարելահողերում՝ (սևահող, երկրորդ տարվա երեքնուկի դաշտ)  $5-10$  սմ շերտում նկատվում է ՏՐ-90-ի ամենացածր պարունակություն, իսկ  $10-20$  սմ՝ ամենաբարձր. բայց երեսութին, վարի ժամանակ հողի վերին՝ ռադիոստրոնցիումով հարուստ շերտը տեղափոխվել է ավելի խորը: Հողի մա-



Նկար 1. SR-90-ի տեղաբաշխումը սևահողերում (տեղամաս 6, 2-րդ տարվա երեքնուկ) բայց շերտերի (ընդհատ պիծ) և գննետիկական ճարիկաների՝ (պիծ):

կերես է դուրս բերվել SR-90-ով համեմատաբար ավելի աղքատ շերտ, որը հնարակա տարիների տեղումներից վերստին հարստացել է ուղիղոստրոնցիումով: Նույն հողային կտրվածքի նմուշների հետազոտումից պարզվել է, որ SR-90-ի ամենամեծ քանակը առկա է 0—55 սմ շերտում: Այստեղ ևս SR-90-ը բայց խորության նվազում է:

Ուշադրության է արժանի այն հանդամանքը, որ 82—113 սմ հորիզոնում հայտնաբերվել է SR-90-ի նշանակալի քանակովունք՝ մինչև 17% (նկար 1): Խաղիկոստրոնցիումի թափանցումը հողի մեջ խորության մեջ նկատվել է նաև գորշ կրային, հինավորց ոռոգելի հողում (կետ 1), որտեղ 110—140 սմ խորության վրա թափանցել է ուղիղոստրոնցիումի 12% (աղյուսակ 1), ընդորում պետք է նշել, որ SR-90-ի բացարձակ քանակովունքը այդ հողում համարյա 2,5 անգամ պակաս է, քան սևահողում (կետ 6):

Որոշ գիտնականներ գտնում են, որ SR-90-ը հողերում կլանվում է հիմնականում 0—5 սմ շերտում և թափանցում է 30 սմ-ից ոչ ավելի խոր: Բարանովի և Պալլոցկայի [4] տվյալներով Միության տարբեր հողերում վերին (0—5 սմ) շերտում կապվել է կուտակված ամբողջ ուղիղոստրոնցիումի 62—82 տոկոսը: Կվարացիալիայի և Գլոնտիի [5] ուսումնասիրություններից պարզվել է, որ Վրաստանի ջրաթափանց հողերում տեղումների առատության դեպքում SR-90-ը թափանցել է մինչև 80 սմ խորություն:

Նկար 2-ում ներկայացված են Հայաստանի տարբեր հողատիպերի 0—20 սմ շերտում SR-90-ի պարունակության համեմատական տվյալներ, որոնք ընդհանուր պատկերով ցույց են տվել SR-90-ի պարունակության ավելացումը տեղանքի ծովի մակերեսութից բարձրացման, հետևաբար նաև մթնոլորտային տեղումների ավելացման հետ: Տվյալները ցույց են տալիս ուղիղոստրոնցիումի համեմատական բարձր պարունակությունը լեռնամարգագետնային հողերում: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ նույն հո-


## Տր-90-ի պարունակությունը Հայաստանի հիմնական հողատպերում

Ընդհանուր տեսքում Հայաստանի հիմնական հողատպերում

Ընդհանուր տեսքում Հայաստանի հիմնական հողատպերում

Հողի տիպը Տիպ հողա	Տեղամասը և համաշխատ վերց- ման ժամ- կետը № համար	Հանդիպությունը Սեզոնը	Խորու- թյունը ամ-ամ	Տր-90 ի մոլորուկ ողաչոր հողում ալոր/մին 100 գ վազ.-սу- խ հող- ատպերում	Տր-90, % գումարից в % от суммы	
					Глубина, см	в % от суммы
Գորչ. հիմնական ուղղի Բурая карбонатная культурино-полив- ная	1 6/1967	Բանջարանց. մշակույթ. Овощные культуры	0-30 30-50 50-90 90-110 110-140	85	20	
				61	21	
				60	21	
				45	16	
				34	12	
Ցաղանակագործ Կաштановая	2 8/1965	Խոպան Целина	0-5 5-10 10-20	570	75	
				56	13	
				93	12	
	3 8/1965	Խոպան Целина	0-5 5-10 10-20	216 67 36	68 21 11	
Միանոր Чернозем	4 8/1955	Խոպան Целина	0-5 5-10 10-20	140	62	
				42	18	
				28	12	
	5 8/1965	Խոպան Целина	0-5 5-10 10-20 20-40	17	8	
				295	60	
				111	24	
				30	6	
	6 8/1967	2-րդ առաջա- կերպություն Клевер 2-й год	0-5 5-10 10-20 20-40	53	11	
				207	31	
				54	8	
				274	41	
				140	20	
Լեռնա-մարգագե- նային Горно-луговая	7 8/1965	Խոպան Целина	0-5 5-15 15-25	330	31	
				179	17	
				541	52	
	8 7/1965	Խոպան Целина	0-5 5-10 10-20 20-40	617	20	
				2298	75	
				69	2	
				75	2	
	9 8/1965	Խոպան Целина	0-5 5-10 10-20	149	52	
				61	22	
				76	46	
Լեռնա-մարգագե- նային Горно-лесная	10 8/1965	Խոպան Целина (поляна)	0-5 5-10 10-20	1102	80	
				76	6	
				196	14	
11 7/1965	Խոպան Целина (поляна)	0-5 5-10 10-20 20-40	324	55		
			149	25		
			43	7		
			75	13		

դատիպի սահմաններում գիտվում են  $Sr-90$ -ի զգալի տատանումներ, այսպիս օրինակ, լեռնամարգագետնային գոտում 8 և 9 տեղամասերի միջև  $Sr-90$ -ի պարունակության տարբերությունը տաս անգամ է: Հավանական է,



նկար 2.  $Sr-90$ -ի համեմատական պարունակությունը ուսումնակրված հողերում ( $0-20$  մ շերտերում): Որպես միավոր ընդունված է  $Sr-90$ -ի ( $\mu\text{Ci}/\text{m}^2$ ) ( $100 \times \mu\text{Ci}/\text{m}^2$ ): Պարունակությունը գորշ հողում (տեղամաս 1): 2, 3՝ շաղանակագույն, 4, 5, 6՝ սևանող, 7, 8, 9, 10՝ լեռնամարգագետնային և 11՝ անտառային հողեր:

որ  $Sr-90$ -ի տեղաբաշխման ընթացքում մեծ նշանակություն ունեն տեղական պայմանները՝ միկրոռելիքֆոր, բուսածածկը, էրապողիցիան և այլն:

Այսպիսով՝ տվյալները ցույց են տալիս, որ խոսքան հողամասերում  $Sr-90$ -ի հիմնական մասը կուտափվում է  $0-5$  մ մակերեսային շերտում՝ ընդհանուր բանակության  $52-80\%$ , բայց խորության այդ պարունակությունը նվազում է, սակայն, երբեմն տեղի է ունենում  $Sr-90$ -ի կուտակումն ավելի խոր շերտերում ( $5-10, 15-25$ ): Վարելաճողերում  $Sr-90$ -ը թափանցում է մինչև  $82-113$  և  $110-140$  մ:

Ուղղուարունցիումի տեղաբաշխումը որոշակիորեն ունի զոնալ բնույթ, այսինքն կախված է ծովի մակերեսություց, տեղանքի բարձրությունից, սակայն կան նաև զգալի տատանումներ կախված ուղիեցից, էրապողիցիայից և այլ գործոններից:

В. Л. АНАНЯН, А. Ш. АВЕТИСЯН

## СОДЕРЖАНИЕ РАДИОСТРОНЦИЯ В ГЛАВНЫХ ТИПАХ ПОЧВ АРМЕНИИ

### Р е з у м е

Изучалась вертикальная миграция  $Sr-90$  в различных типах почв Армении и сравнительное его содержание в поверхностных слоях почв.

Образцы почв брались с целинных и пахотных участков по генетическим горизонтам и слоям (0—5, 5—10, 10—20, 20—40 см).

Результаты исследований показали (табл. 1), что на целинных участках почв в большинстве пунктов (2, 3, 4, 5, 9, 10, 11) независимо от типа почв основная часть Sr-90 (52—80% от суммы) накапливается в поверхностном 0—5-см слое.

В отдельных пунктах (7 и 8), где создались специфические условия для более энергичного промывания, Sr-90 переместился и накопился в нижележащих слоях. Так, в пункте 7 в слое 15—25 см накопилось 52%, а в пункте 8, в слое 5—10 см до 75% от всего содержания Sr-90 в исследуемых слоях почвы.

В разрезе, сделанном на черноземной почве (пункт 6), занятой под клевером (2-й год), на глубине 82—113 см обнаружено до 17% Sr-90 (рис. 1). Такую же картину мы наблюдаем на бурой карбонатной культурно-поливной почве (пункт 1), где на глубину 110—140 см проникло до 12% Sr-90 (табл. 1).

На рис. 2 приведены сравнительные данные содержания Sr-90 в различных типах почв Армении. За единицу было принято содержание Sr-90 (имп/мин/100 г) в бурой почве (пункт 1). Данные, в общих чертах, показывают увеличение содержания Sr-90 в почвах с повышением местности над уровнем моря, а значит и с повышением количества осадков.

Наблюдается значительное повышение содержания Sr-90 в горнолуговых почвах. Одновременно надо отметить, что в пределах типа почвы отмечаются значительные колебания. Очевидно, в распределении Sr-90 большое значение имеют локальные условия: микрорельеф, тип растительности, экспозиция и другие факторы.

V. L. ANANYAN, A. S. AVETISYAN

## ON THE CONTENTS OF RADIOSTRONTIUM IN THE MAIN SOILS OF ARMENIA

### Summary

Studies were carried out on the vertical migration Sr-90 on the different soils of Armenia and its proportional contents in the upper layer (0—20 cm) of those soils.

On arid soils up to 50—80% of Sr-90 is accumulated in the upper layer (0—5 cm). Under definite local conditions Sr-90 is mixed and accumulated in lower layers, e. g. 5—10 cm, 15—25 cm. On arable soils Sr-90 penetrates to a depth of up to 113—140 cm.

In general, the distribution of Sr-90 has a zonal feature. However, in the limits of one and the same soil there are some deviations.

## ЛИТЕРАТУРА

1. А. П. Виноградов, Геохимия редких и рассеянных элементов в почвах. М., Изд. АН СССР, 1957.
2. К. К. Гедройц, Доступность растению кальция, магния и калия, находящихся в почве в состоянии, к обмену не способном. «Удобрение и урожай», № 6, 1930.
3. Дозиметрические и радиохимические методики. М., Атомиздат, 1966.
4. В. И. Баранов, Ф. И. Павлоцкая, Г. А. Федосеев и др., Распределение Sr-90 в верхностном горизонте почв Советского Союза в 1959—1960 гг., Атомная энергия, № 3, 1965.
5. Н. Т. Кварацхелия, Г. Г. Глонти, О миграции Sr в почвах Грузии. «Почвоведение», № 10, 1965.